

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
2014Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հաշվետու ժամանակում ակադեմիայում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- հրշեջ-փրկարարների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.
- բնակչության ուսուցում.
- գիտամեթոդական աշխատանքների կատարում.
- միջազգային համագործակցություն.
- լրացուցիչ աշխատանքներ:

1. Ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.

2014 թ. ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ են անցել 1925 ունկնդիր (ալանով՝ 1787) 88 ուսումնական խմբերում (ալանով՝ 84 խումբ):

- Հաշվետու ժամանակաշրջանում՝
- ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ուսուցում է անցել 398 ունկնդիր.
 - ՀՀ մարզերից ուսուցում է անցել 347 ունկնդիր.
 - Երևանի քաղաքապետարանից և Երևան քաղաքի վարչական շրջաններից ուսուցում է անցել 1180 ունկնդիր:

2. Հրշեջ-փրկարարների վերապատրաստում, որակավորման բարձրացում.

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի 2014թ. փետրվարի 6-ի N56-Ա հրամանով հաստատված ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ում ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայողների 2014թ.-ի վերապատրաստման դասընթացների անցկացման գրաֆիկի համաձայն, ՃԿՊԱ փրկարարական ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել են հետևյալ դասընթացները, առարկայական ստուգարքներն ու քննությունները՝

- «ՀՀ ԱԻՆ ՓԾ ՀՓՁ-ների խմբի պետերի վերապատրաստման» դասընթաց (160 ժամ, 14 մասնակից),
- «ՀՀ ԱԻՆ ՓԾ ԵՓՎ բաժինների հրդեհաշիջման գծով ավագ հրահանգիչների և ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ հրամանատարների տեղակալների վերապատրաստման» դասընթաց (56 ժամ, 12 մասնակից),
- «ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային ՀՓՁ-ների հերթափոխի պետերի վերապատրաստման» դասընթաց (160 ժամ, 14 մասնակից),
- «ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ, ԵՓՎ և ՄՓՎ հատուկ հրշեջ և ՀՓՁ-ների հրամանատարների վերապատրաստման» դասընթաց (56 ժամ, 9 մասնակից):
- «ՀՀ ԱԻՆ ՓԾ ԵՓՎ և ՄՓՎ ՀՓՁ հրամանատարների վերապատրաստման» դասընթաց (56 ժամ, 7 մասնակից),
- «ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ հերթափոխի պետերի վերապատրաստման» դասընթաց (160 ժամ, 15 մասնակից),
- «ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ հրամանատարների տեղակալների վերապատրաստման» դասընթաց (56 ժամ, 12 մասնակից):

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում ՓԾ ծառայողների 2014թ.-ի դասընթացների գրաֆիկի համաձայն, դասընթացներին, առարկայական ստուգարքներին ու քննություններին մասնակցել են 83 ՓԾ ծառայողներ:

2014թ-ին փրկարարական ֆակուլտետի գործունեության արդյունքում իրականացվել են ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ում ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայողների 2014թ.-ի վերապատրաստման դասընթացների անցկացման գրաֆիկով չալանավորված հետևյալ դասընթացները՝

- Ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի 24.01.2014թ. N37-Ա հրամանի իրականացվել է «INSARAG» մեթոդով և պահանջներին համապատասխան «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի շրջանակներում անձնակազմի ուսուցում՝ 29-ից 31-ը 01.2014թ. ք.Գյումրիում (47 մասնակից), 5-ից 8-ը 02.2014թ ք. Կապանում (47 մասնակից), 10-ից 11-ը 02.2014թ. ք.Երևանում (50 մասնակից), ընդամենը 144 մասնակից:
- Ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի 13.02.2014թ. N65-Ա հրամանի իրականացվել է «INSARAG» մեթոդով և պահանջներին համապատասխան «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի շրջանակներում անձնակազմի

ուսուցում՝ 15-ից 19-ը 02.2014թ. ք.Կապանում (47 մասնակից), 20-ից 22-ը 02.2014թ ք. Գյումրիում (47 մասնակից), 13-ից 14-ը 02.2014թ. ք.Երևանում (50 մասնակից), ընդամենը 144 մասնակից:

- Ի կատարումն ԶՅ ԱԻ նախարարի 30.04.2014թ. N329-Ա հրամանի ս/թ մայիսի 5-ից 12-ը կազմակերպվել և անցկացվել է ԶՅ ԱԻՆ ՓԾ ՓՈԻԿ ԶՆՓԱԻԿ ծառայողների «Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի չափանիշներին համապատասխան» դասընթաց (40 ժամ, 15 մասնակից):
- Ի կատարումն ԶՅ ԱԻ նախարարի 06.05.2014թ. N337-Ա հրամանի իրականացվել է «INSARAG» մեթոդով և պահանջներին համապատասխան «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի շրջանակներում անձնակազմի ներքին որակավորման վարժանքների նախապատրաստման դասընթացներ՝ 12-ից 16-ը 05.2014թ. Շիրակի մարզային որոնողափրկարարական թիմի անձնակազմի հետ (47 մասնակից), 21-ից 23-ը 05.2014թ Սյունիքի մարզային որոնողափրկարարական թիմի անձնակազմի հետ (47 մասնակից), ընդամենը 94 մասնակից:
- Ի կատարումն ԶՅ ԱԻ նախարարի 12.05.2014թ. N362-Ա հրամանի ս/թ մայիսի 12-ից 24-ը Գերմանական Կարմիր Խաչի Բաղեն – Վյուրտեմբերգի երկրամասային դպրոցի հետ համատեղ ՃԿՊԱ-ում կազմակերպվել և անցկացվել է ՕԿՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայության կենտրոնական ահազանգման կենտրոնի կրտսեր հրահանգիչներ («911» օպերատորների) և փորձակների ուսուցում (80 ժամ, 15 մասնակից):
- Ի կատարումն ԶՅ ԱԻ նախարարի 29.05.2014թ. N413-Ա հրամանի ս/թ հունիսի 9-ից հուլիսի 4-ը կազմակերպվել և անցկացվել է ԶՅ ԱԻՆ ՓԾ ՓՈԻԿ ԶՆՓԱԻԿ ծառայողների «Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի չափանիշներին համապատասխան» դասընթաց (160 ժամ, 13 մասնակից):
- Ի կատարումն ԶՅ ԱԻ նախարարի 30.05.2014թ. N419-Ա հրամանի 1.1 կետի ս/թ հունիսի 2-ից մինչև հունիսի 30-ը ԶՅ ԱԻՆ ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել է ԶՅ ԱԻՆ փրկարարական ծառայողների 2013թ. հերթական ատեստավորման արդյունքում կենտրոնական և տարածքային ատեստավորման հանձնաժողովների կեղմից ընդունված՝ «Ատեստավորումը հետաձգել մեկ տարի ժամկետով և առաջարկել՝ ծառայողին գործուղել վերապատրաստման» որոշման համաձայն ծառայողների վերապատրաստման տեսական դասընթացներ և ստուգարքներ (20 մասնակից):
- Ի կատարումն ԶՅ ԱԻ նախարարի 30.05.2014թ. N419-Ա հրամանի 1.2 կետի ս/թ հուլիսի 7-ից մինչև հուլիսի 31-ը ԶՅ ԱԻՆ ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել է ԶՅ ԱԻՆ փրկարարական ծառայողների 2013թ. հերթական ատեստավորման արդյունքում կենտրոնական և տարածքային ատեստավորման հանձնաժողովների կեղմից ընդունված՝ «Ատեստավորումը հետաձգել մեկ տարի ժամկետով և առաջարկել՝ ծառայողին գործուղել

վերապատրաստման» որոշման համաձայն ծառայողների վերապատրաստման տեսական դասընթացներ և ստուգարքներ (19 մասնակից):

- Ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի 30.05.2014թ. N419-Ա հրամանի 1.3 կետի ս/թ օգոստոսի 4-ից մինչև օգոստոսի 29-ը ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում կազմակերպվել և անցկացվել է ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայողների 2013թ. հերթական ատեստավորման արդյունքում կենտրոնական և տարածքային ատեստավորման հանձնաժողովների կեղմից ընդունված՝ «Ատեստավորումը հետաձգել մեկ տարի ժամկետով և առաջարկել՝ ծառայողին գործուղել վերապատրաստման» որոշման համաձայն ծառայողների վերապատրաստման տեսական դասընթացներ և ստուգարքներ (16 մասնակից):

Հաշվետու ժամանակահատվածում ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում չպլանավորված դասընթացներին, առարկայական ստուգարքներին ու քննություններին մասնակցել է **480** ունկնդիր:

Կազմակերպվել և իրականացվել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում ծառայության անցնողների եռամսյա ուսումնական փորձաշրջանի դասընթացներ անցնողների ստուգարքներ: **253** մասնակից, որից փորձաշրջանն ավարտել են 183-ը, փորձաշրջանում են գտնվում 35-ը, 35-ը հեռացվել են (04.12.2014թ.):

Մշակվել և ներկայացվել է հաստատման ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության փրկարարական ծառայողների վերապատրաստման հետևյալ դասընթացների ծրագրերը՝

- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՀՓՁ-ների հրամանատարների վերապատրաստման,
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ-ների հրամանատարների տեղակալների և Երևան քաղաքի փրկարարական վարչության հրդեհաշիջման գծով ավագ հրահանգիչների վերապատրաստման,
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՀՓՁ-ների խմբի հրամանատարների, խմբի պետերի, հերթափոխի պետերի վերապատրաստման,

ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 2015 թվականի փրկարարական ծառայողների վերապատրաստման պլան ժամանակացույցով անցկացնելու համար:

Ընդհանուր հաշվարկով հաշվետու ժամանակահատվածում ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում դասընթացների մասնակցել են **563** ունկնդիրներ, ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայողների 2014թ.-ի դասընթացների գրաֆիկով նախատեսված **105** ունկնդիրների փոխարեն և **253** եռամսյա ուսումնական փորձաշրջանի մասնակիցներ:

3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.

Ուսանողների	Բակալավրիատ	Մագիստրատուրա	Միջին
-------------	-------------	---------------	-------

թիվը	առկա	հեռակա	առկա	հեռակա	մասնագիտական
Ընդունվել է՝	67, որից 39-ը՝ անվճար	117	16	32	39
Ավարտել է՝ 236	48	119	11	21	37
վերականգնված	31	26	3	1	4
ազատված /ազգային բանակ	32	6	-	-	2
ազատված /այլ պատճառով	30	46	2		11
ԸՆԴԱՄԵՆԸ Ուսանողների թիվը 12.12.2014 թ. դրությամբ	175, որից 75-ը անվճար	771	29	54	113

4. Բնակչության ուսուցում.

Բնակչության ուսուցման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- 0,5 ժամ, 1 ժամ և 2 ժամ տևողությամբ տեսասկավառակների հանձնում 262 հանրակրթական դպրոցների և Նախադպրոցական հաստատությունների.
- Նախադպրոցական կրթական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ներկայացուցիչներին հանձնվել են 74 «Ես կարող եմ», 94 «ԱՌՆ կրթություն», 20 «Ո՞վ եմ, ի՞նչ եմ», 18 «Հոգեբանասոցիալական աջակցություն երեխաներին արտակարգ իրավիճակներում», 50 «Դպրոցի տարիանման կազմակերպումը» ձեռնարկներ, հանձնարարականներ, 57 «ԱՌՆ կրթություն. Տառադարան»:

5. Գիտամեթոդական աշխատանքների կատարում.

Հաշվետու ժամանակահատվածում

- Հրատարակվել են 14 ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք, 25 գիտական հոդված, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, «Ճգնաժամ հաղթահարողներ» ուսանողական թերթը:
- Ներկայացվել են 7 զեկուցումներ միջազգային գիտական, գիտագործնական խորհրդակցություններում և խորհրդաժողովներում.

- իրականացվել է ուսանողական գիտաժողով, հրատարակվել է ժողովածու (15 հոդված):
- ներկայացվել է 2 զեկուցում ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում:
- ղեկավարվել է 32 մագիստրոսական ատենախոսություն:

6. Միջազգային համագործակցություն.

Ակադեմիան իրականացրել է ուսուցման միջազգային ծրագրեր ՄԱԿ-ի UNDP-ի, unisef-ի շրջանակներում, մասնակցել է մի շարք գիտագործնական սեմինարների Ռուսաստանի Դաշնությունում, Ղազախստանում և այլն:

Փրկարարական ֆակուլտետի անձնակազմը մասնակցել է մի շարք միջազգային միջոցառումների Լեհաստանի, Կատարի, Թուրքիայի հանրապետություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում:

7. Լրացուցիչ աշխատանքներ.

Ակադեմիայի անձնակազմը մասնակցել է թվով հինգ վարժանքների նախապատրաստման և անցկացման ապահովման աշխատանքների, քաղձառայողների և փրկարարական ծառայողների ատեստավորման գործընթացներին, տարաբնույթ կարգերի մշակման աշխատանքներին և այլն:

Ակադեմիայի ուսանողները մասնակցել են փրկարարի օրվան նվիրված և միջազգային ուսումնավարժանքներին, միջազգային ծրագրերով ՀՀ-ում վտանգավոր երևույթների ուսումնասիրման ծրագրին (Մասնավորապես Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից ՀՀ-ում սողանքային աղետի կառավարման ծրագիր), «Էկո Փիս» ՀԿ կողմից կազմակերպված ուսուցողական դասընթացներին և այլն:

Կատարվել է ակադեմիայի մասնագիտությունների համապատասխանեցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգչին, ըստ ոլորտների և ենթաօլորտների:

Ակադեմիան միացել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգին:

Ակադեմիան միջազգային չափանիշներին համահունչ կրթություն տրամադրելու նպատակով մշակել է համապատասխան փաստաթղթեր (կարգեր, կանոնակարգեր, ուղենիշներ, չափորոշիչներ և այլն):

Տեղ գտած թերությունները.

Տեխնիկական հագեցվածության մեջ կան չլուծված խնդիրներ: Դրանք կապված են համակարգչային խաղարկման լսարանների տեխնիկական վերազինման, ժամանակակից փրկարարական տեխնիկական միջոցների թարմացման և համալրման հետ:

Ուսումնական բազայի հետ կապված կան թերություններ: Դրանք պահանջում են Լուսակերտի ուսումնական բազայի և ուսումնական մասնաշենքի բարելավման անհրաժեշտություն:

Ակադեմիայի փրկարարական ֆակուլտետի հակահրդեհային և փրկարարական ցիկլերում կա դասախոսական կազմով համալրման կարիք:

Մոտ ապագայում ակադեմիան նպատակ ունի՝

- իրականացնել գործնական պարապմունքների համար վարժաիրապարակի վերակառուցման և վերազինման ծրագրերը: Այս ուղղությամբ առաջիկա տարում կտեղակայվեն ուղղաթիռն իրեն համապատասխան հարթակով, ինչը հնարավորություն կտա իրականացնել տուժածների օդային տարահանման վարժանքներ: Կտեղակայվեն երկու մետաղական աշտարակներ՝ 12-14 մետր բարձրությամբ, ինչը հնարավորություն կտա պարանային աշխատանքների գործնական ուսուցման:
- Կտեղակայվի ուղղաթիռը մոտ 11մ բարձրությամբ, ինչը հնարավորություն կտա տուժածների օդային տարահանման հարցերով փրկարարների մոտ հմտությունների կատարելագործում
- ՃԿԿ-ի մոդելով նոր ուսումնական լսարանների գործարկում.
- Շարունակել աշխատանքները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտությունները դասիչներով և անվանումներով ««ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգ»-ի մեթոդաբանությունը, ցուցանիշները և հաշվարկի մեխանիզմները» փաստաթղթում ընդգրկելու համար, միաժամանակ կատարել ակադեմիայի մասնագիտությունների համապատասխանեցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգչին, ըստ ոլորտների և ենթաօլորտների.
- ուսումնական գործընթացում զարգացնել տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման գործընթացը.
- զարգացնել ուսումնական գործընթացում իրավիճակային վերլուծությունների և կառավարչական խաղերի ներդրման աշխատանքները:

ՌԵԿՏՈՐ, Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ